



ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏՍՍՈՒՄԱՆ

Ղր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Տր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՂ. 6

Փիիհնիկ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ


ՇԱԲԱԹ 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 24

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պիլեգիֆճի)



Ա.

Մեռնողը. նախնիքը. Ա. սարիւները

Երգե՛լ թէ գրեւ կեանքը ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻՆ, որ իր երկրին զաւակն եղաւ հարազատ, տառապող, բայց արի ու մաքառող: Տառապանքի հերոսն եղաւ անի, ու հիմա, արիւն ու մոխիր բուրող Հայրենիքին վերեւ սաւառնաթեւ, շահինի աչքերով կը չափէ պարապը, զոր ինք թողուց իր կանուխ ու անսպասելի մահովը: Կարճ, շատ կարճ տեւեց այդ կեանքը բեղուն ու հիւթեղ. խօսեցաւ, գրեց ու գրեց, ճամբորդեց, հսկեց, կռուեցաւ, անդուլ գործեց. ի վերջոյ իր դերը — վսեմ ու նախախնամական — դեռ չ'աւարտած՝ գերեզման իջաւ գեղեցիկ գարուններովը, որոնք ա՛յնքան պտղաւէտ աշուններ կը խոստանային:

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ, իր մէն մի քայլին, մէն մի խօսքին, մէն մի արարքին մէջ յայտնուեցաւ հայրենասէր հոգի մը. իր ցեղին — որուն գերութիւնն իր մեծ վէրքն եղաւ իր բովանդակ կեանքին մէջ — անկախութեան երազն իրազործելու տենչովը տանջուեցաւ. ծրագիրներ յղացաւ, գործնական միջոցներուն դիմեց, անխոնջ ու ազմիկ, կռուեցաւ ու կռուեցաւ. քաղաքակերթ աշխարհը թնդացուց իր պարբերաբար հրապարակ նետած գլորեցնող ու ընդվզեցուցիչ յօդուածներովը, ու այսօր, միահամուռ պաշտուի ու յաւերժական սուգի առարկայ, կը վերկենցաղի սրտերուն մէջ Տիգրան Երկաթ, մեծ Հելլենասէրն ու աննման Հայը:

Այս վաղամեռիկ հանճարին կենսագրութիւնը մեր ընթերցողներուն ընծայելու գաղափարը նոր չէ, անոր մահուան վաղորդայնին յղացուած է այն. սակայն, կատարեալ, իր տեսակին մէջ եզական ու շահեկան գործ մը արտադրելու փափա՛գն է որ մեզի խրատեց սպասել, փնտուելու գտնելու

ստոյգ ու բուն աղբիւրները, ուսկից կարելի ըլլար քաղել էական ու անհրաժեշտ ծանօթութիւնները:

Այդ, այսօր, այդ բոլոր ծանօթութիւններն 'ի ձեռին ունինք, շնորհիւ բացառիկ դիւրութեանց, զորս հաճեցաւ մեզի ընծայել յաւետ ողբացեալ Հայուն ընտանիքը, մեր արամադրութեան տակ դնելով Երկաթի ապրող անտիպ ձեռագիրները. քերթուածք, վէպիկներ, ճառեր, օրագրութիւն, ևն, ևն. նաև, ժամանակակից քաղաքական մեծ 'իւմքերուն — Ֆրանսացի, Յոյն, Ռուս, Ամերիկացի, ևն. — Տիգրանի անմխիթար մօրը զրկած բազմաթիւ նամակները, անոր մահուանն ու անոր համառօտ կենսագրութեանը տետրակին հրատարակմանն առթիւ:

Հո'ն, այդ բոլոր գրութիւններուն մէջ է Տիգրան Երկաթ, բանաստեղծ, գրագետ, հրապարակախօս ու քաղաքական մարդ, հայութեան ճաճանչաւետ փառքերէն մին ու տիպար հայրենասէր:

1870 Փետրուարի 4ին, Կ. Պոլսոյ Բերայի Բոլոնիական փողոցին ու Մեծ պողոտային անկիւնը շինուած բնակարանին մէջ լոյս աշխարհ եկաւ այն հրեշտակակերպ մանկիկը, որ աւազանէն ստացաւ Կարապետ անունը, և որ ապա Տիգրան Երկաթը պիտի ըլլար:

Նորածնին մայրը, Տիկին Մ. Պիլէզիքճի,¹⁹ տարուան գարնային ծաղիկ հասակին մէջ էր, երբ առաջին երջանկութեան սարսուռն զգաց, իր մայրենի գրկին մէջ առնելով իր մոռնական սիրոյ նախախայրիքը, անդրրանիկ ծնունդը:

Նորածինը կը սերէր ծնունդով Կ. Պոլսոյ հայ ընտանեաց ամենէն տոհմիկներէն. իր հաւը, Պօղոս Ամիրա Պիլէզիքճի, Զոհրապնեբու վաղեմի ցե-

ղին շառաւիղ, իր կրօնակիցներուն մէջ միակն է որ ստացած է Ղալաթիոյ հայ հռովմէականաց Ս. Փրկչի Մայր Եկեղեցին թաղուելու պատիւը: Իր հայրը, Գրիգոր Պիլէզիքճի, շքեղ ու ազնուական երիտասարդ մը, որ անուն հանած էր արդէն իր չափազանց առատաձեռնութիւններով, զորս անխորհիւրէր Եկեղեցիին ու կարօտեալներուն, 27 տարուան հասակին մէջ, Ս. Գրիգորի Ասպետ (Chevalier de St. Grégoire) մեռաւ. իսկ մայրը, Թուրքիոյ կիներուն մէջ իբրև գեղեցկագոյններէն ու զարգացեալներէն մին նկատուած, կը սերի Թընկըրի գերդաստանէն, որ Գաղատիայէն 2 1/2 դար առաջ գաղթած եկած է Կ. Պոլիս:

Տիգրանի նախնեաց մէջէն նշանաւոր կին մ'է Մարիամ Գասրն, իր պապուն մամը, որ Գանտիլի կը նստէր. համարձակախօս, յանդուգն, իշխեցող, փառասէր ու առնացի կորովի տէր կին մը: Յարութիւն Ամիրա Պէզճեան շատ կ'ակնածէր անկէց ու յաճախակի այցելութեան ատեն անոր ձեռքը կը պագնէր: Այս կինն այնքան բացառիկ դիրք մը կը վայելէր ամբողջ գերդաստանին մէջ որ, մեծ Հալաճանքին ժամանակ, շատ մը կեղեքումներէ զերծ մնաց: Թընկըր գերդաստանէն 40-50 հոգի, կ'աքսորուին Գաղատիա, ամենասոսկալի չարչարանքներու և զրկանքի ենթարկուած, ձմեռուան սառին ու բուքին, իրենց մէջէն ոմանք ճամբան կը մնան ցրտամեռ: Աքսորելոց մէջ կը գտնուէին նաև Մարիամ Գատընը, Տիգրանի մօրը հօրեղբայր Պօղոս Թընկըր բանաստեղծը, որ այդ անցքը գրած էր ծառին վրայ. ասոր միւս եղբայրը Պեսոնա, Վիէննա զրկուած, ուսում առած ու հոն բռնի քահանայացած: Մարիամ Գատըն աքսորանքին մէջ սրտին ցաւէն մեռած է:

Սակայն եթէ գեղեքինք իր նախնեաց իւրաքանչիւրին մանրամասն կեն-

սագրութեան վրայ, պիտի չեղինք մեր նպատակէն, որ է միայն ի՛ր իսկ կենսագրութիւնը, որուն ընթացքին մէջ առիթ պիտի ունենանք երբեմն երբեմն կանգ առնել անոնց վրայ ալ:


Օր մը, Ապրիլի զուարթ ու գեղեցիկ օրերէն մին, վերջալուսային արևի մը տկար ճառագայթները Բերայի բարձր բնակարանաց լուսամուտներէն ներս կը սողոսկէին, ապակիներուն տալով դեղին ու կարմիր գոյներ. հազիւ տակաւին երկու ամսուան էր, խանձարապատ երախան, դայեկին խնամքին յանձնուած, թէ և մայրը չ'էր կրնար չ'այցելել յաճախ, զանի գգուելու ու անոր վարդ այտերը համբուրելու համար: Վերջալոյսը կ'ոսկեզօծէր կարապետի կարմիր մետաքսէ վերմակը, ոսկեզօծ օրօրոցին վրայ ձգուած: Մայրը ներս կը մտնէ և չը կրնար ծածկել իր ներքին հրճուանքը զոր կ'զգայ այն պահուն իր աչքին առջև պարզուած տեսարանին հանդէպ: Խանձարուրքը քրքրուած, քակուած, տոտիկներն ու թաթիկները կապերէն արձակուած, երախան բարձրագոյ կը խնդար կը ծիծաղէր, կը խայտար, ու ինքզինք օրօրոցէն դուրս նետել կը փորձէր, այնքան զուարթ էր ու երջանիկ:

Այդ օրօրոցը, այդ քրքրուած ու քակուած խանձարուրքը, այդ զուարթածիծաղ մանկիկը, այդ անտիական երջանկութիւնը. այդ ամենը չը՞ յիշեցներ ողբացեալ Նալբանդեանի «Ազասն Աստուած» ին «Օրորոցում կայկայած»ը: Ու Տիգրան երկաթ ի՛նք յետոյ անձնաւորեց Նալբանդեանի մրտատիպարին այն ազատասէր մանկիկը. . . :

(Շարունակելի)

Ս. ԲԻԻՐԱՏ

ՀԱԿՍ. ՀԱՆՐԱԳՐԻՆ ԱՌԹԻԻ




Ուղղամտութիւնը պոռնկացաւ Աղեփսանդրիոյ մէջ. 323 Հայերու ստորագրել սրուեցաւ հակահանրագիր մը որուն պարունակութիւնը հայհոյութիւն մ'է իրականութեան ու նեմարտութեան դէմ:

Օրէնքին բռնաբարիչները կը պարծեանայսօր 323ով. — անլի մեծ պիտի ըլլար խայսառակութիւնը Աղեփսանդրիոյ Հայութեան համար՝ եթէ անլի ստուար ըլլար թիւը ստորագրողներուն հանրագրի մը որը ապացուցուած ամենայայտնի իրողութիւններ ուրանալու կը յանդգնի: Օրէնքին բռնաբարիչները կրցած են մոլորեցնել 28 անձեր ալ Օրէնքի գործադրութիւնը պահանջող հանրագրին ստորագրողներէն եւ ասոնց ալ ստորագրել տուե են «Բողոքագիր» մը որով կը յայտարարուի թէ իրենց վստահութիւնը չարաչար գործածուե է Սահմանադրութեան պատշապաններուն կողմէն. . . :

Այս ամօթալի երեւոյթին առջեւ ո՞վ չի յիշեր հաւիտական սխրահոյակ մեթոսները որոնցմով արդարութեան ու նեմարտութեան ձայնը խեղդելու համար կը դիմուի հանրագիրներու որոնք հեռի են հասարակաց կարծիքի հարազատ արսայայտութիւնը ըլլալէ: Պարագան յար ու նման է բոլորովին:

Այ՛քի առջեւ ունենալով ստորագրութիւն մուրալու համար գործածուած անբարոյացուցիչ միջոցները, մանաւանդ թողոքագրի ստիւ, — բողոքագիր մը՝ որը անգամ մը նեմարտութեան հարուածին սակ ցեխերու մէջ փախչուելէ վերջ՝ վերակենդանացած է ցեխոս ձեռներու մէջ, — միտքարական է տեսնել թէ 210էն 28ը վիայն սկարացած են այդ միջոցներու առջեւ:



Գալով հակահանրագրին պարունակութեանը, մենք արդէն ասկէ առաջ ալ յայտարարեցինք թէ նեմարտութեան հակառակ այդպիսի գրութիւն մը, ո՛չ թէ 323, այլ եթէ 323 անգամ 323 usorագրութիւններով ալ ծածկուած ըլլայ, վէճի նիւթ եղող խնդիրներու հանդէպ ո եւ է նեանակութիւն չունի եւ անկարող է աշխարհածանօթ յայտնի իրողութիւնները կերպարանափոխելու։

Արդի Թաղ. Խորհուրդը հակասահմանադրական է. նախորդ Խորհրդին շարունակութիւնը չէ՝. Ժողովրդէն ընտրուած չէ՝, այլ «Վսեմ. Փաշայէն կարգուած առժ. հանգամանակով»։ — Ահա ջախջախիչ փաստերով եւ ապացոյցներով հաստատուած իրողութիւնը. ասոր դէմ էիչ կամ շատ usorագրութիւններ կուս մը չեն արժեր. ինչպէս թուաբանական նեմարտութիւնները՝ նոյնպէս պատմական յայտնի եղելութիւնները փոխ չեն դրուիր։ Իրողութիւնը իրողութիւն կը մնայ՝ ի՛նչ որ ալ ըսեն եւ ի՛նչ որ ալ ընեն, — նոյն իսկ եթէ հակահանրագիր usorագրեն, նոյն իսկ եթէ *nusիկան քերեն*....., նոյն իսկ եթէ «ՆԻԼ» անունով *անգոյ լրագիր* մը հակառակը վկայէ., նոյն իսկ եթէ *իրենց քերտովը երկինք ելլան*, կամ *իրենց կոկորդը պատռեն*, — ինչպէս կըսէ «Փարոս»ը։

Այդ ամենը կը ծառայեն միայն մէկ բանի. հաստատելու մեր հանրային բարեքուն ապականութիւնը, մեր առաջնորդողներէն շատերուն բարոյական սնանկութիւնը։ Ահա թէ ո՛ր յանգեցաւ խեղաքիրումներով, սուտերով եւ իմաստակութեամբ սկսուած պաշտպանութեան գործը Թաղ. Խորհուրդի մը ենթադրեալ օրինաւորութեանը։ Ամբողջ հասարակութիւն մը կը ջանան անբարոյացնել, անոր ողջմտութիւնը սպաննել, սուր իբրեւ նեմարտի քաղաւորեցնելու, ապօրինաւոր իբր օրինաւոր փելու իրենց օրհասական նիգերուն մէջ։ Ահա թէ ուր կառաջնոր-

դեն ժողովուրդը իր ինքնակոչ դեկավարները, որոնց մէջ ինկզինքնին *յեղափոխական* հռչակողներ ալ կան. — ապօրինութեան պաշտպան կանգնող, ստութիւնը եւ խաբէութիւնը իրենց միջոց ընտրող, ամիրայական յաւակնօտութիւնները փայփայող շեքող շողոփորթ, գարշապար լգող «յեղափոխականներ»...

Եւ այսպիսի տխուր, անօթալի, խայտառակ երեւոյթի մը առջեւ ի՛նչ կընէ մեր Սրբազան Առաջնորդը, որուն առաջ *պարսականութիւնն է*, Սահմանադրութեան 94-րդ յօդուածին համաձայն, *Ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկէ*. — այս գայթակղակից երեւոյթին առջեւ կը հրնուի անիկա.

— «Սրբազան Առաջնորդը գոնուանկութիւն յայտնեց պատգամաւորաց. ... «Ահա այսպէ՛ս կը մատուցուի հանրագիր մը, ըստ Ն. Սրբազնութիւնը, եւ ՌԻՄ.Խ ԵՄ որ ամեն տեսակէտով յարգեցիք օրէնքին գծած պայմանները (** ? ? ?)։ Թող ժողովրդի մեծամասնութիւնը (**) վստահ ըլլայ թէ իր բարձրագոյնները յրջօրէն նկատողութեան պիտի առնուին.» (Սահմանադրութիւնը պիտի մնայ բռնաբարուած ա՛յնպէս ինչպէս որ է այսօր)։ —

Հակահանրագիրը usorագրողները կը բաժնենք երեք դասակարգի.

Ա. — Անո՛նք որ կատարեալ գիտակցութեամբ սուս կը խօսին — ՆԻԼ լրագրի առասպելը յերիւրող Պարոնին տեսակէն — որոնք եւ ուրիշները մոլորումի եւ անբարոյականութեան կառաջնորդեն։ Ասոնք հասարակութեան ամենավնասակար բեւաբաններն են. գառի զգեստով գայլեր, գերեզմանակրկիտ բորենիներ, երկբերնի կարիներ, երկնիդ լեզուով օձեր։ Այդպիսիները անխնայ հարուածել ու ձողկել՝ մամուլին ամենաարբազան արտականուպիւնն է։

Բ. — Անո՛նք որ ներքական շա-
հերէ դրդուած, սպառնալեաց տեղի
սալով (1) կամ *խաբեր* համար կըստրա-
գրեն նեմարտութեան հակառակ գրու-
թիւն մը. այդպիսիները կապացուցա-
նեն, ո՛չ թէ Թաղ. Խորհուրդի սահմա-
նադրականութիւնը, այլ իրենց քաղա-
քացիական արիութիւնէ գուրկ ըլլալը:
Աստե՛ք ալ արհամարհանքի կամ՝ է՛ն
ֆիչը՝ արգահասանքի են արժանի:

Գ. — Անո՛նք որ անգիտակցաբար
ստրագրած են, հաւաստով իրենց
միամտութիւնը շահագործողներուն խօս-
քին: Խաբէութեան զոհեր՝ որոնց սխալը
կարդարանայ իրենց միամտութեամբը
եւ որոնց միտքը աւելի եւ աւելի լու-
սաւորել պարտականութիւն է:

Ո՛րչափ կուզէինք որ այդ 323ի
անունները կարգաւ արձանագրուէին
հրապարակային մատեանի մը մէջ, որ-
պէս զի ամօքի եւ խայտառակութեան
արասը անջնջելի կերպով դրոշմուած
մնար իրենց հակօքին վրայ եւ գէթ ու-

«Փարոս»ը մերժող «Կիլոն», որ շարա-
ներով, ակիսներով բան գործ քողած,
Պէտրոս շղեւարին մոլեռանդութեամբը
զինուած, փողոցէ փողոց իր պրօքուցած
հանրագրին հանար ստրագրութիւն կը մու-
րար ու Թաղական արտերուն հակառա-
կողներուն դէմ խաչակրութիւն կը քարո-
զէր, հետեւելով նախ օրինակը բարձրեւ
տրուած քաղաքականութեան մը, քոյէն կը
ձաւթէ սարիներէ ՚ի վեր իր հաւաստիւն
ու գործունեայ ծառայութեամբը ծակօք իր
գրագիրը. ինչո՛ւ. — Որովհետեւ Բարոնին
կամֆին ու ստիպումին դէմ դրած է. չէ՛
ստրագրած հակահանրագիրը...:

Իժբաղդաբար մեկէ աւելի են օրի-
նակները. ու մեկէ որ մեկ հասը յիշեցիկէ,
պատճառն այն է որ այսպէս ձաւթուած
խեղճ գրագրին կիւնը, զաւակներուն քեռէն
բռնած, վաճառասեւ վաճառասուն, սեւ
տուն կը դիմէ գործ մը փնտելու համար
իր անուանին, որ գործէն հանուած է հա-
կահանրագրին խաբերը համար...:

Անօ՛ք է, անօ՛ք, ա՛յ հերիք է:
Մ. Խ.

րիւսները ապագային զերծ մնային ո՛-
ր եւ է կատկածանքէ թէ իրենք ալ ստ-
րագրած ըլլան այդպիսի ստայօղ օրի-
նագրուած հանրագրի մը սակ:


Ի՞նչ, ի՞նչ կը կարծեն Առաջնորդ,
Թաղական, Քարտուղար, անոնց ար-
բանեակները, *tutti quanti*. Ի՞նչ, կը
կարծեն թէ այդ կերպով պիտի կարե-
նան ծածկել նեմարտութիւնը, խեղդել
արդարութեան ձայնը, ոտնակոխ ընել
օրէնքը: Ի՞նչ, 323 ստրագրութիւն կոր-
զելով կը կարծեն նուիրագործել բրո-
նաբարումը Սահմանադրութեան, որը
ամբողջ հայ ազգին միակ ժառանգու-
թիւնն է իր դժբաղդութեան մէջ, —
միակ նշանը թէ հայ ժողովուրդը *եւ-
նիչերիներէ, ցեղապետներէ, տերտերի-
ներէ, միւրթիւններէ* ոչխարի հա-
մակերպութեամբ կառավարուող *պա-
շտօգոյ* խառնիմաղանն մը չէ, այլ
պարտքի եւ իրաւունքի քաղաքացիական
ըմբռնումներով օժտուած գիտակից կազ-
մակերպեալ ժողովուրդ մը:

Ի՞նչ, եթէ վայրկեան մը ենթադ-
րենք որ Աղեփսանդրիոյ մէջ, ամբողջ
Եգիպտոսի մէջ, յաջողին Սահմանադրու-
թեան գործադրութիւնը խափանել եւ
ամիրայական դրութիւնը մեջնջենաւ-
րել, կը կարծեն թէ յաղթանակը տա-
րած պիտի ըլլան. կը կարծեն թէ
պիտի արդարանան բովանդակ հայու-
թեան առջեւ: Կը կարծեն թէ արտա-
սահմանի ազատ մամուլին արտեսն աչ-
քեւէն պիտի վրիպին Աղեփսանդրիոյ
մէջ տեղի ունեցող անցուդարձերը: Կը
կարծեն ազատ մնալ բովանդակ Հա-
յութեան կեցամբանէն ու դատապար-
տութենէն. անա՛ «Փիւնիկ»ին ետեւէն
«Փարոս»ը ապսակեց գիրենք, «Փարո-
ս»ին ետեւէն «Կոչնակ»ը, «Շարժում»ը
«Հայելի»ն, եւ ուրիւսները պիտի գան
կարգաւ:

Սպասեցէ՛ք, խաւարատէրներ, ուժը
դաւադրութիւններու մէջ փնտռողներ,

ու պիտի տեսնա՞ք թէ վերջնական յաղթանակը իրաւունքի, նւնարժանքի եւ արդարութեան կողմն է միտս:

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ



ՔՐՈՆԻԿ

— Նորոգուած միջադէպ մը. — Տիար Եդ. Թուրչուճեան այս օրերս խըմբադուլութեանս զրկած է քօտս վեհապալի մը պատճէնը, որուն հրատարակութիւնը կը խնդրէ: Եթէ, կ'ըսէ Տիար Եդ. Թուրչուճեան, անցեալները «Արշալոյս»ի մէջ Գեորգ Չավուչեան անուն մէկէ մը պաշտպանուող բարեկամս, իր պարկեշտութեան ապացոյցը տուած ըլլար մինչև ցարդ՝ հերքելով իր պաշտպանին ստայօդ գրութիւնը, չը պիտի ստիպուէի հրապարակ հանել այդ քօտս վեհապալը, որ ամեն բան կը պարզէ:

Սակայն մենք նկատելով Տիար Եդ. Թուրչուճեանի ակնարկած անձին հանգամանքը, իբրև պաշտօնեայ կառավարութեան, և համոզուած ըլլալով որ յիշեալ քօտս վեհապալին հրատարակութիւնը քնասաբեր ու անխորժ հետեանքներ կրնայ ունենալ Պ. Գեորգ Չավուչեանի պաշտպանեալին թէ՛ նիւթական ու թէ՛ բարոյական շահերուն համար, կը յետաձգենք նոյնին հրատարակութիւնը՝ յուսալով թէ այս զեկոյցին վրայ հերքումը շուտով կը հրատարակուի, ու այսպէս, միանգամ ընդ միշտ կը փակուի այդ տխուր միջադէպը:

— Բերկյութեամբ կ'իմանանք թէ Տիար Միհրան Թէլեան որ երկու տարիէ ի վեր Պրիւքսէլի Համալսարանին մէջ իւր իրաւաբանական ուսմունքը կատարելագործելու կ'զբաղէր, այս անգամ ամենափայլուն քննութեամբ մը յաջողած է Տօքթօս ան Տուուայի

վկայականն ստանալու, առաջին հանգիստանալով 20 եւրոպացի աշակերտաց մէջ որոնք այդ քննութեան ենթարկուած են և որոնց 5ը միայն արժանացած են այդ վկայականին:

Մեր շերմագին ու անկեղծ խընդակցութիւնները:

— Գերապասիւ Այվազեան եւ Արիիկեան Տրիպոլիս. — Պաշտօնապէս կը հաւաստուի թէ՛ Ազգ. Պատրիարքարանը մեր Սրբ. Առաջնորդին յանձնարարած է Եգիպտոսի քահանաներէն մին զրկել Ափրիկեան Տրիպոլիս. հոն երթալու տրամադիր քահանայ մը չը գտնուելով հոս, Գեր. Այվազեան ժըլտական պատասխան մը կը զրկէ Պատրիարքարան: Ասոր վրայ, Սրբ. Պատրիարքը կը յանձնարարէ երկրորդ նամակով մը, Այլեքսանդրիա գտնուող Արժ. Դանիէլ և Բարթողիմէոս վարդապետներէն մէկը զրկել:

Սրբ. Առաջնորդը, կանխաւ այս երկու հայրերուն գաղափարը շօշափելէ յետոյ, կը պատասխանէ թէ՛ յիշեալ վարդապետները կը փափագին, եթէ արտօնութիւն տրուի, վերագառնալ իրենց վանքերը, փոխանակ երթալու Տրիպոլիս, ուր Թուրք կառավարութիւնը չ'պիտի հանգիստ թողու զիրենք և թերևս իսկ բանտարկէ:

Հետեւաբար, Տրիպոլիս կը մնայ ցարդ առանց հովիւի: Յայտնի է թէ՛ Գեր. Այվազեան Սրբազան մին է, իր խոհական ու միշտ զգոյշ քաղաքականութեամբ, Օսմ. կառավարութեան համարումը վայելող եկեղեցականներէն, որոնք արտասահմանի առաջնորդութիւնը կը վարեն: Արդ, քանի որ Տրիպոլոյ Հայերը, հոգ չէ թէ ըլլան փոքրաթիւ, կարօտ են հոգևոր մխիթարութեան, եւ քանի որ Եգիպտոսի վիճակին մէջ Գեր. Այվազեանի ներկայութիւնը՝ վիճակիս ազգային շերմաչափին վրայ մէկ աստիճան անգամ տարբերութիւն մը չը բերեր, լաւա-

գոյն չէ՞ որ, Նորին Սրբազնութիւնն ինք երթայ այցելել այդ լքուած ու մոռցուած բեկորը հայութեան ու խեղճ աքսորեալներուն համբերութիւն քարոզէ...:

— ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՁՄՐԴԵՐ. — Այս վերնագրով Իսաչական կէս-պաշտօնական օրաթերթը ԹԻԻՊՈՒՆԱ, Կ. Պօլսէն 7 Հոկտ. քուսկանով հետեւեալ թղթակցութիւնը կը հրատարակէ.

Կացութիւնը կը ծանրանայ Հայաստանի մէջ 1895-1896ի ջարդերուն մէկ նոր տպագրութիւնը վախցուելու աստիճան:

Քանի մը Հայկ. Նահանգներու եւրոպայան տէրութեանց գործակալներուն թղթատարական ու հեռագրական տեղեկագիրները թուրք իշխանութեանց կողմէն վար դրուեցան. ասկէ զատ, Հայոց Պատրիարքարանը 2 ամսէ ի վեր զուրկ է ո՛ր և է լուրէ, քանի մը թեմերուն, մասնաւորապէս Մշոյ և Սասնոյ դաւառակներուն նկատմամբ, որոնց բացարձակ տիրապետն է թրքաքրդական անկանոն «Համիսիյէ» հեծելազօրքը:

Սև դահլիճին բարեհաճութեամբը — որ կեդր. կառավարութեան տուած հրամաններուն հնազանդելով կը բանայ ամեն նամակ, որոնց մէջէն կ'անհետացնէ խժոժութեանց վրայ խօսողները — մեղի հազիւ հասած են քանի մ'աննշան նամակներ:

Հակառակ ճշգրիտ տեղեկութեանց այս պակասին, մայրաքաղաքիս քանի մը քաղաքական ինչպէս նաև հայկական շրջանակներուն մէջ կը կարծուի թէ լեռնոտ Սասնոյ թշուառ փախըստականները, որոնք 5000 կանոնաւոր զօրքերէ ու քանի մը հազար սովալըլուկ համիտիյէներէ աշարուած էին, այս պահուս արդէն ջարդուած ըլլալու են:

Կը կարծուի թէ լաւագոյն ըլլալու չէ՞ Մշոյ, Բաղիշու, Խարբերդի, Վանայ

ու Կարնոյ քրիստոնեայ պղտաբնակութեանց մեծագոյն մասին վիճակուած բազմը: Պատշաճ է սակայն զգուշութեամբ ընդունիլ ֆրանսական աղբիւրէ կարգ մը ցնցող լուրերը, ինչպէս և բարեզեան զանազան լրագիրներուն դիւրագուշակելի դիտումներով մղած պայքարը, և սպասել պաշտօնական տեղեկագրութեանց հիւպատոսներուն — իտակալանէն զատ, զի ամբողջ Հայաստանի մէջ իտալական հիւպատոսի մը հետքն անգամ չը կայ, — որոնք հակառակ թուրք իշխանութեանց դրած արգելքներուն, պիտի շուտով երեան բերեն ճշմարտութիւնը:

Յամենայն դէպս, Հայաստանի մէջ կացութիւնը հարկ չէ՞ որ լաւ եղած ըլլայ, քանի որ պէտք զգացուած է պաշտօնանկ ընել Կարնոյ մոլեռանդ կուսակալը Բէուֆ բաշան, ահոր տեղ կարգել Նազմ Պէյը, որ պարկեշտ ու արդարակորով մարդու մը համբաւն ունի:

Վեց մեծ տէրութեանց ներկայացուցիչները, թուրք իշխանութեանց վարմունքէն, իրենց թղթակցութեանց ու հիւպատոսական գործակալներուն՝ Հայկ. Նահանգներու ներսերը ճամբորդելու դէմ դրուած արգելքէն — ճամբաներու բացարձակ անապահովութեան պատրուակով — զգածուած, այս շարժումն մէջ քանի մ'անգամներ գումարուեցան, և ինչպէս որ կը հաւաստուի ինձի, սրոշած են եղեր Սուլթանին զրկել հաւաքական ծանուցագիր մը, ուժգին կերպով բողբել մարդկան իրաւունքին այս նոր բռնաբարման դէմ:

Յիշեալ ծանուցագրին լեզուն նրուազ խիստ չէ՞, կ'ըսուի, ի մասին վերջին գողութեանց, որ տեղի ունեցան թուրք պաշտօնէից կողմէն Սեւանիկի ու Մուսթաֆա բաշա — Կ. Պօլսի երկաթուղեաց դիժերուն վրայ: Այս պաշտօնեաները, որոնց յանձնարարուած

էր գրաւել Երիտասարդ Թուրքերուն թղթակցութիւնները, դիւրին գտան գողնալ դրամատանց ու մասնաւորաց արժէթուղթեր, դրամատոմսեր և ուրիշ արժէքներ:

Ասոր վրայ կեդր. կառավարութիւնը — որ թերևս երկրորդական կը նկատէր դեսպաններու բողոքին այս վերջին մասը — հրամայեց Հայկ. նահանգներուն իշխանութեանց՝ ալ դադարեցնել Սև Դահլիճին գործունէութիւնը պաշտօնական թղթակցութեանց վերաբերմամբ, կառավարիչներն արտօնելով, ընդհակառակը, տալ այսուհետև հիւպատոսական գործակալներուն՝ ու զուած ուղեկից ոստիկաններն. բայց, միևնոյն ատեն, ժանտախտի կոսկածելի դէպք մը երևան կը բերուէր Սամսոնի մէջ, նաւահանգիստ ուր կը յանգին Հայաստանի գլխաւոր մեծ ճամբաները. սակայն յիշեալ հիւանդութիւնը քննելու պաշտօնով Թուրք միքրոպաբան նուրի պէյը դեռ Կ. Պօլսէն չը մեկնած՝ Բ. Դրան հրամանին վրայ՝ Առողջապահական Միջազգային Խորհուրդը քարանդիւնա դրաւ Հայաստանի նաւահանգիստ Սամսոնի նահանգին ծովեզերքներէն եկորներուն դէմ:

Ի՞նչ կըսէք քաղաքական — վարչական այս խորամանկութեան...:

— **ՌԱՁՄԱՓՈՐՁ ՄԸ Կ. ՊՈԼՍՈՅ ԴԷՄ.** — Թրիպուռնայի Օտէսայի թըզթակիցը 11 հոկտ. թուականով կը գրէ հետևեալը զոր Թրիպուռնա պատշաճ վերապահումով մը կը հրատարակէ:

Սեբաստաբօլի մէջ, ի ներկայութեան զինուորական բոլոր երևելի մասնագէտ անձնաւորութեանց ու զօրաբաժիններու բոլոր զօրապետներուն, արտակարգ կարևորութիւն ունեցող ռազմափորձեր կատարուեցան: Կառավարութիւնը շինել տուած էր, թերակղզեակին վրայ, որուն մօտ սովորաբար կ'երթայ խարսխել նաւատորմիչը,


երկաթուղիի դիժ մը և բերդ մը յարևման անոր որ կը փակէ Վոսփոքի մուտքը, շուրջ 150,000 ռուբլի (400,000 ֆր) ծախքով, հասկնալու համար թէ ո՞րքան ժամանակի մէջ թէ՛ մին թէ՛ միւսը կրնային քանդուիլ Սև ծովու նաւատորմիչէն, Թուրքիոյ դէմ պատերազմի պարագային: Ու անոր արդիւնքներն աւելի քան գոհացուցիչ ելած են, դատելով կարևորութենէն, որ անոր կը տրուի զինուորական շրջանակներուն մէջ. ամենը վերածուեցաւ աւերակոյտի մը, ու այս՝ աւելի կարճ ժամանակի մէջ քան զոր կարելի էր նախատեսել. ու կը հաշուեն թէ՛ թշնամութեանց պարագային, նաւատորմիչը, Սեբաստաբօլէն մեկնած, 8 ժամուան մէջ պիտի կրնայ կռուի բըռնուիլ յիշեալ բերդին հետ և օր մը վերջը, լուութեան դատապարտելով միւս բոլոր պզտիկներն ալ, Կ. Պօլսոյ շուրերուն մէջ գտնուիլ:

Ինչպէս որ կը տեսնուի, ուրեմն, մեր բարի Հայր Սէնեզին բոլորովին անիրաւ չ'էր երբ կը քարոզէր թէ՛ խաղաղութիւնը... միջոցն է պատերազմի:

— **ԿՐԷՏԷՆ՝ ՅՈՒՆԱՍՏԱՆԻՆ.** — Թա՛ն ամսոյս 24 թուականով կը ծանուցանէ թէ՛ չորս տէրութիւնները վճռած են սկզբամբ նուիրագործել Կրէտէի կցումը Յունաստանի թագաւորութեան:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մեր յարգելի աշխատակիցներէն Տիար Միհրան Տամատեան «Յաւելուածիւ առթիւ» կարևոր յօդուած մը պատրաստած է, որուն հրատարակութիւնը նիւթերու առատութեան պատճառով յետաձգեցինք յաջորդին:



դարագլխոյ մը բացումը Արեւելի դրժ-
բաղոյ ժողովուրդներուն համար:

Ֆրանսա՛ն է որ եզակիան պատիւն
ունեցաւ քաղաքական յարաբերութիւն-
ները խզելու, ո՛չ թէ Թուրքիոյ հետ,
այլ Ապս-Իլ-Համիտի հետ որ, քա-
ղաղ դարէ մ'ի վեր, կը ծառայեցնէ
ամեն վարչական քաղաքական գործի-
ները, զոր թագը իրեն կ'ընծայէ քան-
դիլու համար իր երկիրն ու կեդեֆելու
իր հպատակները: Մենք, Օսմանցիներս,
կը ծափահարենք, առանց բացառու-
թեան, Քրանսական Հանրապետութեան
յաջող նախաձեռնարկը, որուն կը
կայպոյնիք հոգով ու արտով, սասա-
րկու համար անոր նմեզողական գործո-
ղութեան՝ ընդդէմ սարսափի ու խորա-
մբանկութեան վարչական ձեւին: Մենք
պատրաստ ենք ընդունիլ ամեն իրաւա-
խոհութիւն որ կը միտի Կ. Պոլսոյ մէջ
հաստատելու պարկեօս ու մարդկային
կառավարութիւն մը, ասակ ապահովե-
լու բարոյ յարաբերութիւններն օտար
ազգերու հետ եւ զնահասելու միջազ-
գային յարաբերութեանց արժէքները:
Նպէտ տեղաւորելու, նահանգներուն մէջ,
զանազան ժողովուրդներուն օրինաւոր
բարձրանկներուն համապատասխանող
եւ անհասներուն՝ անհասական ազա-
տութեան ու սոսկական նախաձեռնու-
թեան իրաւունքի վայելումը հայրա-
թող վարչութիւն մը:

Կը սիրենք յուսալ թէ՛ ազատա-
կան Հանրապետութեան ու արդար եւ
խաղաղապէր ինքնակալին միջեւ ա՛յն-
քան հանդիսաւոր կերպով հռչակուած
դաւենակցութեան պտուղը պիտի ըլլայ
անդորրութեան ու արդարութեան վե-
րափաստանումը Արեւելի ժողովուրդնե-
րուն մէջ, որ կը մնան անանուն եւ
աննախընթաց քնահանոյժի մը հարսա-
հարութեան ներքեւ, ինչպէս նաեւ ան-
հետացումը միակ սեւ արաքին որ շա-
րղունակ կ'ապառնայ Եւրոպայի պայ-
ծառ հորիզոնին:

Ֆրանսայի զոս մարդասիրական

սեռակէն այս նախաձեռնարկը, որուն
նեցուկ կ'ըլլայ արդարութեան ու խա-
ղաղութեան սիրով լի արտի տէր թո-
գոսափառ դաւենակիցը, պիտի հան-
դիպի միայն եւ միայն քաղաքակրթեալ
բոլոր սէրութեանց միահամուռ հաւա-
նութեանն ու յաւերժական երախտա-
գիտութեանը բոլոր անժառանգեալ ժո-
ղովուրդներուն, որոնք մասնուած են
կառավարական ձեւերէն ամենազար-
եւիքին:

ԻՍՄԱՅԻԼ ՔԷՄԱԼ


— Պ. Զինովիէ՛Ք ու Հայկական
Հարցը. — Կ. Պոլսէն, 13 Հոկտեմբեր
թուականով Թանկին մէկ մասնաւոր հե-
ռագիրը կըսէ թէ՛ Դուռը մինչեւ ցարդ
Լորանսօյի գործին մէջ ո՛չ մէկ պա-
սասխան տուաւ:

Պ. Զինովիէ՛Ք, ռուսական դես-
պանը, իր ուրբաթ օրուան ունկնդրու-
թեան միջոցին, զոր ունեցաւ Սուլթա-
նին հետ, չ'զիտնալով դեռ Ռուսիոյ
միջամտութեան արդիւնքը, Քրանսա-
կան գործերուն վրայ, գաղտնի պա-
հեց բոլոր խնդիրը: Պ. Զինովիէ՛Ք
ամբողջ ժամ մը խօսեցաւ Սուլթանին
հետ, միմիայն Հայաստանի, Ալքանիոյ
վերջին դէպքերուն վրայ. պնդեց թէ
անհրաժեշտ է Հայոց, Ալքանիոյ քրիստո-
նէից արդի կացութեանը վերջ մը դնել,
ու միջոցներ ձեռք առնել դադարեցնելու
համար անումը խառնակութեանց ու-
րոնց հետեւանքները կրնան ըլլալ աղե-
տաբեր:

— Հայաստանը կրակի ու արիւնի
մէջ է. — Pro Արմենիա լրագիրը դեռ
մօտեւ հազիւ կըցած է ստանալ Ռե-
սէն (Պարսկաստան) Սեպտ. 24 թուա-
կանով քառուած հետեւեալ հեռագիրը:


«Յուլիս 2էն ի վեր Մուշի քրչա-
կայքը մեծ մասով հուրի սուրի մէջ է:
Մառնիք, Կուրավու, Իլթար, Շախլան,
Խարվու, Տալուրիկ, Կէլիկուզան ու
Շենիկ գիւղերը քանդուեցան ու ան-

րեցան թուրք զօրհերէն ու Քուրսերէն. քանզոյս քաղաքաց անխաղախի վրայ կուգան հաստատուիլ Աւերիթները, Քուրսերը, որոնք արդէն գրաւած են այդ վայրերը: Անմիջական միջամտութեան պէտք կայ:



ԲՐՕ ԱՐՄԷՆԻԱԻ 10 Հոկտ. ի խորհրդակցականին բարգաւանութիւնը.

ԵՐԿՍԱՅՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ



Զ'եմ գիտեր թէ մեր հանրապետութեան պետական մարդերը, — որոնք Զարին այցելութեան ասեն 'ի Գօմբիէները, շլացան դերը յաղալով ձէնովայի դիսին 'ի Վերսայլ — ժամանակ ունեցան դպչելու ծանրակէի խընդիրներու: Սակայն կը խորհիմք թէ՛ Լամսոսը կոմսը լոկ Պ. Ռոսսանի ասփակ գգուերգը մտիկ ընելու համար չ'էր եկած եւ թէ՛ Պ. Տէլգասէի հետ խօսած պիտի ըլլայ ուրիշ բանի վրայ քան օդին եղանակին ու արեւմտական տարազներ կրող եւ կարգ ու ձեւի պատկերները բռնող մեր ռամկավարականներու շնորհիւ վրայ:

Բեթրսպուրի ինչպէս Բարիզ, շատ քիտեն ծանրութիւնը կացութեան թուրքիոյ հայկական նահանգներուն մէջ: Վանայ ռուսական հիւպատոսին Մուս առաքուր բաւական ցոյց կուտայ թէ՛ Պ. Զինովիէճ կը վախճայ 1895ի արիւնոս տեսարաններուն վերադարձէն:

Յորմէ հետէ Ֆրանսան յարմար տեսաւ առկախել իր յարաբերութիւնները Սուլթանին հետ, ո՛չ ոք, պատշտական աշխարհին մէջ անգամ, ա՛լ շահ չ'ունի կեղծելու կամ մեղմելու հրեմարտութիւնը: Գործակալութիւններն իսկ, որոնք չ'կամութեամբ կամ յոռտեստութեամբ չը պիտի ամբաստանուին, կը թողուն անցնիլ քանի մը տեղեկու-

թիւներ որ բնոյթն ունին կարծիքը վրդովելու:

Իր պարսկականութիւնն ա՛յնքան արիւրար կասարող ու ժողովրդի մը մարտիրոսութեան թղթակոյսը օրը օրին մէջտեղ հանող այս լրագրին մէջ չէ՛ որ պէտք է պնդել ներկայ ժամուան յայտնի վստահներուն վրայ: Բոլոր ինչ որ կրնամ հաստատել, այս է թէ՛ երոպական դիւանագիտութիւնն ընդհանրապէս, ու ճրանսականը մասնաւորապէս, ոնիրներու նոր կիկլոնի մը խիստ հաւանական պարագային ա՛լ չ'պիտի ունենայ ստուերն անգամ չճմեղանիքն, զոր պետական մարդերուն վաստիւնը ջանաց երբեմն քաղել իրենց կարծեցեալ տգիտութենէն ու դէպքերուն յեղակարծ պայթումէն: Ով որ կարգացած է Դեղիսն ու Կասպոյս Տեսրակները, գիտէ թէ՛ ինչ պէտք է խորհել այս խեղճ ու կրակ պատրուակին վրայ, եւ թէ՛ ամեն պարագայի մէջ այս խուսափանքը չ'պիտի կրնար արդարացնել տերութեանց անըզպայութիւնը, անգործութիւնը, կրաւրական մեղսակցութիւնն այս երկայն տաւիկն ընթացքին մէջ:

Այսօր որոտումի քաւալումները կը լսուին երկար ասենէ 'ի վեր:

Փայլակը պիտի չը զարմացնէ եւ ո՛չ մէկը: Եթէ Հայկական նոր Զարդեր հնձեն մնացորդը ժողովուրդի մը, ուր հրամայուած սպաննութիւնն ըրաւ լմցուց արդէն իր հունձէր, իբր թէ քաղաքակրթեալ ըսուած կառավարութիւններն անոր որ ասենօք քիտսնէութիւն կը կոչուէր, պիտի չ'կրնան իրենց վրայէն նետել այս կրկնուած յանցանքին պատասխանատուութիւնը:

Անցեալը մէկդի կը թողում, երոպայի այս չարաւոյք հրաժարումը, անկեղծութենէ զուրկ նիգերու մէջ թուլնալով ու 'ի վերջոյ շնական անտարբերութեամբ շահուղէնի հաշիւին անցընելով ազգի մը ջարդը: Արդէն որ հիմակուան իշխանութեան գլուխը

զնուող մարդերը սեռակին մէջ իրանց նախորդներուն հետ համեմատելի չըլլալու չը լսուած բաղդաւորութիւնն ունին:

Համարձեց կոմսը նակասագրապէս Հոպանոճ իշխանին շարունակողը չէ՛: Պ. Տէլգաւէ պատի վասկեցաւ կրե-սական հարցին ժամանակաւոր լուծու-մին սասարելով:

Պիտի ուզէ՞ ենթարկուիլ պատմու-թեան բոլոր խտութեանց, արտասու-նելով մին այն մեծ հրաժարիւմէն (*gran rifiuto*) որուն՝ մարդկային խիղճը չը ներէ: Իր բոլոր նախորդներէն ա՛լ անելի յանցաւոր պիտի ըլլար, ու ասի՛ շատ մը պատճառներով:

Նախ իր աչքին տակ ունի անոնց օրինակը, եւ պէտք էր յուսահասիլ քաղաքագէտ ցեղէն (*genus*) եթէ այս ար-իւնտ դասը չը ծառայէր իրեն:

Երկրորդ, տեղեկացած է ինք, թէ՛ բարձրաբարբառ դէպքերէն եւ թէ՛ դի-մումներէն որոնք եղած են իրեն փոք:

Վերջապէս, կացութիւնը, իր վար-մունքները ներդէլ է շատ հեռի, կը նպաս-տաւորէ, կը դիւրացնէ ամենակորովի որոշումները: Եթէ մենք իրական գոհա-նակութեամբ մը տեսնենք անկախութիւնը դիւանագիտական յարաբերութեանց ընդ մէջ Դրան ու Ֆրանսայի, ըսել չէ թէ մենք ո եւ է պատշաճ մ'ունեցած ըլ-լանք երբէք այս վէճին բարոյական նշանակութեան վրայ:

Շիտակն ըսելով, նուաստացուցիչ ու զգուշի բան մ'եղաւ հանրապետու-թիւնն ա՛յնքան խոնիս դիրքի մը մէջ տեսնել շահու եւ ստոր խնդիրներու, արեւելեայ (*levantin*) պահանջներու հա-մար, մինչդեռ թեւերը կապուած ծալ-լուած ու իր ապիկարութիւնը պատե-պանած էր՝ մարդոց ու մարդկութեան իրաւունքին երեսին նետուած ամենա-հրէշային արհամարհանքին հանդէպ: Եւ սակայն, ո՛ր կէտի վրայ ալ պայտի կոխը, ո՛ր կողմէն ալ արեւմտեան տե-

րութիւն մը յարձակի Ապս-Իլ-Համիտի վրայ, բարոյականութիւնը, իրաւունքը, յառաջադիմութիւնը հեն իրենց օգուտը միայն կը գտնեն:

Չ'լսուած բան մը պիտի ըլլար որ Ֆրանսան, իր դեսպանը Կ. Պօլսէն ֆա-շելէն յետոյ, լիբանոնու, սակներու եւ փողերու խնդրի մը համար հաւա-նէր զանի նորէն ետ դրկելու, առանց որոշ հրահանգներու՝ կենսական գոր-ծին նկատմամբ, որմէ կախում ունի գոյութիւնը բովանդակ ժողովուրդի մը: Ժամը հնչեց վեհական ձեռնադրկներուն:

Քառորդ դար մ'է որ Եւրոպան խօսք քողոց անոր հանդիսաւոր խօսքը. քողոց որ Սուլթանը խաղայ Պերլինի Դաւեմագրին հետ, որ միակ սահմանա-դրութիւնն է իր իշխանութեան: 61 տը յօդուածը՝ արդար էր, բարեպատեհ ու հարկաւոր՝ 1878ին: Փայլակներուն կա-պարագոյն նուշլին, անոր ստիպողու-թիւնը հռչակուեցաւ 1896ի Մայիսի յիշատակագրին մէջ:

Ի՞նչպէս կ'ըլլայ որ այն ասեմէն ՚ի վեր դիւանասանց դարաններուն մէջ կը ննչէ անի՛ մեռեալ ծնած բոլոր բա-րեւորագումներուն փոք, որոնք պիտի վրկած ըլլային, եթէ ո՛չ Օսմ. կայս-րութիւնը, գոնէ հազարաւոր անմեղ գոհեր...: Ի՞նչ է ուրեմն անարդարու-թեան այս գաղտնիքը: Ի՞նչ գին պիտի կտէր Եւրոպան իր պատիւին, Արեւելի խաղաղութեան, աշխարհի հանգիստին:

Սուլթանը, հակառակ իր յստու-սանքներուն, ի հեռու կսայտաւակ վե-հապետներու կանխոյթներուն որոնք Լօ-հէնկերին խաղալ է յետոյ, չ'են խոնահար իր կամակիցներն ու մեղսակիցներն ըլլալու Ապս-Իլ-Համիտի մը, — Սուլթանը գիտէ որ իր հաշիւը վերջացած, առնե-լիքը լմեցած է ու իրեն ա՛լ չը մնար գործելու սխալ մը — ոնիր մը — Խիս խօսք մը, որ զինք նորէն իր յանձնառութեանց գործադրութեան պի-տի հրախրէր, որ զինք պիտի դնէր

իր ամենալայն պատասխանատու-
րեանց դէմ յանդիման, եւ որ միեւնոյն
ասեմ իրեն պիտի բանար փրկութեան
միակ համբան, պիտի կրնար այս ժա-
մուս ձեռք բերել լուրջ արդիւնքներ:

Կը համարձակիմ հաստատել թէ՛
ո՛չ մէկ սէրութիւն, ո՛րքան ալ եսա-
կանօրէն իրապաւոճ ու նետեակ ըլլայ
անոր քաղաքականութիւնը, չը պիտի
ժժէր հակառակելու, նոյն իսկ խուլ
կեցով ու ստորեկրեայ մանգերով,
կարծիքի մը որ քաղաքակիրք աշխարհի
խղիկն վերջնագիրը պիտի ըլլար:
Դարձեալ, պէ՛տք է՛ սխալի մէջ իյնալ:
Եթէ երբէք այսպիսի ձեռնարկ մը գը-
լուխ չ'ելնէր ամբողջապէս, ամեն պա-
րագայի մէջ, ձեռնարկողը պիտի գերծ
կացուցանէր ահռելի պատասխանա-
տութեան մը:


Ներադրելով իսկ թէ բարեկրո-
գումները — երկայն շունչի մը գործ —
չը գործադրուէին, հաւաստի է թէ՛ ու-
նիրները կանգ կ'առնէին:

Արդ, պէ՛տք է որ կանգ առնեն
ունիրները: Պէ՛տք է որ արիւնը դադրի
հոսելէ: Ու պէ՛տք է այս, մարդկային
ցեղին սփոփանքին համար: Ու երկու
միջոց միայն կայ վերջ մը դնելու
այս գայրակղանքին: Մին արդէն նեա-
նակածս է, այսինքն, խելացի դիւա-
նագիտութեան մը իրական, որոշեալ
միջամտութիւնը: Միւսը — ու անկա-
րելի պիտի ըլլար անոր կիրառութեանը
մասին խորհուրդ չը սալ ազգի մը
որ կրնայ լիովին ապացուցանել թէ՛
գործօն արիւրեան մը պակասէն չէ
որ հազարներով մարտիւններ տուա եւ
թէ հերոսներ ալ կը հաւուէ — միւսը,
բոլոր գէններով անանուն բռնակալու-
թեան մը դէմ կոռուող Յեղափոխու-
թեան նորէն տեսարան մտնելը պիտի
ըլլար:

Կառավարութիւնները, որոնք պիտի
մեծեն բռնել առաջին համբան, ուղ-

ղակի պատասխանատու պիտի ըլլան
հայկական յուսանատութեան գերագոյն
դիմումներուն:

ՖՐԱՆՍԻՍ ՏԸ ԲՐԷՍՆՆԵ



— ԳՅՀԻՐԷԻ Գալստեան երկ. վար-
ժարանին նկատմամբ այս օրերս մեզի
հասած նամակները նշանակալից են:
Եթէ հաղորդուած այդ տեղեկութիւն-
ներէն 10% ը ստոյգ են, Գահիրէի մեզ
բաղդակից մեր դժբաղիւնները կերելի թէ
իրենց դժբաղդութիւնը չ'զգալու աս-
տիճան իբնութեամբ են որ ցարգ կը
պահեն դատաւարտելի լռութիւն ու
անտարբերութիւն մը ներկայ կացու-
թեան հանդէպ:

Ի՞նչ կը նշանակէ հոգաբարձուի
հովերով թռչող պարսպ-տակաւ երկու
տղու ձեռքը խաղալիք դարձնել մեր
մատաղ սերունդին ապագան: Ի՞նչ
ըսել է 5 տարուան անխոնջ գործունե-
ութեան, անձնուէր ծառայութեան,
անվիճելի ձեռնհասութեան ու պար-
կեշտ վարուց ապացոյցը տուող բազ-
մաշխատ ուսուցչուհի մը, ինչպէս է
Օր. Սօֆի Մանիսալեան, թէ եւ առ-
ժամեայ կերպով, բռնադատել քաշուիլ
տունը նստելու: Մենք առաջինն ենք,
Օր. Մառի Պէյլէրեանի արժանիքը
գնահատողներէն ու կը վաւազինք որ
Գալստեան Վարժարանի վարչութիւնը
գիտնայ օգտուել այդպիսի ուժէ մը.
սակայն նկատի ունենալով զրկանքը,
որուն ենթական է այսօր Օր. Սօֆի
Մանիսալեան, իր բռնադատեալ հե-
ռացումովը, աւելի քան երբէք մաղ-
թելի է որ վերջ մը դրուի այդ անո-
րոյ ու դայթակղեցնող կացութեան,
այսպէս կամ այնպէս:

Յաւալի է որ Սրբ. Առաջնորդնիս
այս խնդրին մէջ ալ իր ունակութիւն
դարձած «ոչ կարելիք» կը կրկնէ. ու-
նակութիւն զոր դժբաղդաբար ժա-
ռանգած է Կեդրոնի Կրօն. Ատենին իր

անդամակցութենէն: Հետեւաբար, իրաւունք չ'ունինք մեղադրելու Խաչ ու Միւլթիւն քարոզող մեր Սրբազանը:

Կը մնայ յուսալ և սպասել նոր ու օգտակար կարգադրութիւն մը Ն. Վ. Տիգրան բաշայէն, որ այս շաբթուս վերադարձաւ Եւրոպայէն: Մաղթենք որ շուտով վերջ դրուի Գալլստեան Վարժարանին այդ կացութեան:

— Մէշվերէթի վերջին թիւին մէջ Երիտասարդ Թուրքերէն Ահմէտ Րիզա կը գրէ հետեւեալը.

Չ'ենք կարծեր թէ ԲԱՐԻ ՊԱՆՇ սաշով յեղափոխական Հայերուն՝ մտադրութիւն մ'ըլլայ ստեղծելու արեւի յուրջ առիթ մը միջաստուտեան կամ ֆաշիստական աշխարհին հաւասարակցելու թէ՛ զինուած ուժը պիտի գործածուի ո՛չ թէ ֆանի մ'արեւելեաց դրամատիկներուն, այլ Արեւելի հարսանաւարուած ֆրիսոնկեաներուն ՚ի նպաստ:

Ի՛նչ որ այ ըլլայ, այսպիսի ֆաշիստներ մ'իւր պտուղները պիտի բերեն, զանազան կողմերէ գերագոյնով մոլորեցնողութիւն մ'որ արդէն չարիստական ցորէն արթնցած է: Անխոհեմ ֆաշիստականութեան մը ձեռքով այսպէս յուրացած հրդեհը՝ անմեղներու կեանքը պիտի արժէր:

Այդ ողորմելի գաղափարին դէմ ջանալովից կիսաանասկ մը հրատարակուած է Բրո Արմէնիսի Հոկտ. 10 թիւին մէջ, զոր կը յանձնարարենք մեր ընթերցողներուն:

— Թորֆիոյ եւրոպական Հիւսպասուները, կը գրէ Բրո Արմէնիսի մէջ թղթակիցը Իսկէնտերունէն, անխիղճ մարդիկ են. տարիներուն ընթացքին մէջ ընտելացած են բոլոր թրքական բարբարոսութեանց, ու երբէք հոգեբնին չէ՛ ամբողջ ժողովուրդի մը հալածանքը, չարչարանքը, խոշտանգումն ու մարտիրոսանալը.

բայց եթէ այդ Հայոց կրած նեղութիւններէն ամենափոքրիկ մաս մը ուղղուի իրենց անձերուն, իրենց կենտրոն, իրենց զաւակներուն դէմ, անտարակոյս, շուտով պիտի հասկնան թէ՛ ի՛նչ կը նշանակէ թրքական վայրագութիւնը, որոնց նկատմամբ այսօր իրենք ականատեսներու դերը միայն կը կատարեն:

Հարցուցէ՛ք իրենց թէ ինչո՞ւ անտարբեր են. ահա՛ իրենց պատասխանը, զոր կուտան առանց ո՛ր եւ է խղճահարութեան. «Մենք իրարունք ունինք իստուրեղու մեր հպասակներու գործերուն. մեզի ի՛նչ. իր հպասակներն են անոնք, կրնայ ընել անոնց ինչ որ կ'ուզէ:»

Այս հիւսպատոսները, բաց ՚ի Քըրանտականէն, կանխաւ գիտեն էնիսի ծրագիրը, բայց չ'են հաղորդեր զայն իւրաքանչիւրն իր տէրութեան:

Այսօրուանէ իսկ գիտեն որ վաղը կամ միւս օրը պիտի գործադրուին այս դժոխային հանդերձանքները, եւ սակայն կը լռեն: Կը լռեն, որովհետեւ վարժուած են բոլոր թրքական հաճոյքներուն: Հայ անունով ազգ մը կը ջարդուի, կը ջնջուի. Թուրքին մտածածը՝ ասոնք ալ կը մտածեն. հիւսպատոսներուն համար կ'ըսեմ, որոնց իւրաքանչիւրն իր անտարբերութեամբ ամօթ մ'է իր տէրութեան: Բազաքակրթեալ կոչուած Տէրութիւնները գիտե՞ն արդեօք թէ՛ իրենց ներկայացուցիչները կերպով մը մեղսակիցներ են Թուրքին. թէ՛ իրենց պաշտօնը կ'անգիտանան ու անոր մէջ կը թերանան:

Այս տեղի Հայերուն թոյլ չ'արուեսցաւ երթալ Ամերիկա. տեղական սուտիկանապետ մը հետեւեալ արգելքը ցոյց տուաւ. «Պունըար բոյիթիֆայը գարըչսըրիեօրըսը»:

— Անգղիս եւ Ռուսիս կատարեալ համաձայնութեան մէջ են Աֆղանիս-

տանի նկատմամբ, այնպէս որ ո՛ր և է պատահականութեան դէմ ամեն ապահովութիւն երկուստեք երաշխաւորուած կրնայ համարուիլ:

— Բօլիթիչէ գօտէսքոնսէնճի մէկ հեռագիրը կ'իմացընէ թէ՛ մասնաւոր դատական ատեան մը՝ մահուան դատապարտած է 26 օսմ. հպատակներ, որոնք Թուրքիա դեռ չը վերագարձան իրենց շնորհուած պայմանաժամէն առաջ:

Այս մահապարտներուն մէջ են Թուրքիոյ պետական քանի մը կարևոր անձնաւորութիւններ, ի մէջ այլոց, Իսմայիլ Բէմալ պէյ, պետական խորհրդոյ անդամը, որուն նամակը թարգմանուած է ներկայ թիւին մէջ. Միթհատ Բաշայի թուր Իսմայիլ Բէմալ պէյ, Նախկին քարտուղար Արտ. գործ. նախարարութեան. Պօղոս Քանդարեան (Ձէքի), ևն ևն...:

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ

Ամենամեծ կարեւորութիւն ունեցող բաները կրկնելը երբէք աւելորդ չէ, որովհետեւ մոլորութիւնն ալ միշտ կը կրկնուի:

Հասարակութիւնը կը ցանկայ իր հետ վարուիլ այնպէս, ինչպէս կնոջ հետ, որ ըսեն անոր այն՝ ինչ որ նա կուզէ: (ԿէՕԹէ)

Կան շատ պարկեռ ձեւացող մարդիկ՝ որ կը կարծեն թէ ամեն բանի մէջ իրատուն ունին, վասն զի քանի մը հազար ոսկի եկամուտ ունին:

(ՎՈՂԴԵՌ)

Մարդկային կեանքի մէջ ոչ մի երեւոյթ՝ առանց հոյն հասարակութեանը յատուկ պատճառների՝ երեւան չէ գալիս:

(ԲԱՅՅԻ)

Հասարակութեան մէջ սովորաբար կը մտնեն շողմոքիով, կը մնան այնտեղ քաղցկանալով եւ կը հեռանան ծաղրելով: (ԷՄ. ՎԵՐԹԷՅՄԻՐ)

Ծանր է չարալեզու ըլլալ, ծանր է նաեւ ամբաստանող կանգնիլ գերեզմանաց վրայ, բայց երբ շողմոքութիւնը մահաբան կը դառնայ, եւ ժողովրդեան ու ընտրողաց յիշողութիւնն կը ծաղրէ եւ կը մոլորեցնէ, լուրն է յանցանք: Ծածկել վերերը՝ ազգին պատիւը պահել չէ՛, արհամարհել է դեղն ու դարմանը:

(ԾԵՐԵՆՑ)

Երբ լիբերը խօսի սէր են, ապուները բերանաբաց մտիկ կընեն, պարկեռ մարդիկ խաչ կը հանեն, իսկ իմաստունները մէկդի կը քաշուին:

Ինքնամոլ մարդն է որ ապուներու մէջ փողերով կը հոչակէ իր մէկ աննեան գործը որ ժամու մը կեանք ունի:

(Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ)

Կեանքի փոփոխութեան վրայ խոր ազդեցութիւն ունին միայն այն հրապարակախօսները, որոնք զինուած են կեանքի էական կողմերու հետ ծանօթութեամբ մը: (ՊԻՉՄԱՐԳ)

Վասերու համար միշտ ասելի է լոյսը, որովհետեւ չղջիկները սիրում են թափառիլ խաւարի մէջ...:

(ԲԱՅՅԻ)

Յիմարները միշտ ամեն բանի պատասխան կը գտնեն, անոնց հետ խօսած ասեն երբէք վերջին խօսքը քուզ չըլլար:

Չկայ խաղաղութիւն չարատէր յիմարներու հետ. եթէ պահ մը խոնարհ երեւիս, կը կարծեն թէ առ անի այդպէս կը շարժիս:

(ՎՈՂԴԵՌ)

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Հնկերութիւն
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագումար 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մուլային, Գետային և Ցամաքային փոխագրութեանց արկածներու գէմ:

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Գիմեջ առ Հնդհանուր Գործակալ եւ Լիսգոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՍԱՆ

Աղեփասանորիս, պզտիկ Մէնչիէ Ապուսաւրսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մուլային Ապահովագրական Հնկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագումար 5,000,000 ֆրանկ

ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր գեղորայք, սրէսիւսիքներ եւ հանքային թարմ ջուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ գեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին:

Գեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

ԳԵՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱԶԵՂԻՆԱՅ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Քաղաքիս երևելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ

գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, ևն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Գիմեջ Հայկ. Մեծ Սրճարանը:

ԿՍԹՆԱՏՈՒՆ - ՃԱՇԱՐԱՆ

ՆՈՐ ԳԱՐ

Այս նոր բացուած ճաշարանին առաւելութիւններն են. ծովեղերեայ օդ, ամենամաքուր սպաս, և խնամեալ սպասարկութիւն, — ինչ որ կը փնտուռի յաճախ ուրիշ ճաշարանաց մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշակով պատրաստուած, իչենց համեղ ու այլազան հանգամանքներով արժանի են ամենապահանջկոտ քիմքերու գնահատման:

Գիմեցէ՛ք նոր Դարի ճաշարանը, Ապու Չատրբ փողոցին մէջ, Դալարեան Եղբարոյ Վաճառատան գիմաց. գնացէ՛ք, ճաշակեցէ՛ք ու տեսէ՛ք: